



Հաստատված է՝

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր
Գիրա-վերլուծական կենտրոնի խորհրդի 27.10.2014թ. թիվ 03-Ա որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐՄԱՆ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԳՐԱՎՈՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(AMICUS CURIAE)**

№ 03-14-Ա

27.10.2014թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին
առընթեր գիրա-վերլուծական կենտրոնը (**այսուհետ՝ Կենտրոն**),

քննարկելով ՀՀ սահմանադրական դատարանում քննության ընդունված
«Քաղաքացի Արման Այվազյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի
315-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ
հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության
վերաբերյալ» գործով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը
համապատասխանության հարցը,

տալիս է սույն գրավոր մեկնաբանությունները հետևյալի մասին.

➤ **Հարցի կարևորությունը.**

Քաղաքացի Արման Այվազյանը (**այսուհետ՝ դիմող**) 2014 թվականի հունիսի
5-ի դիմումով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանից
խնդրել է որոշել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (ՀՀՊՏ
2003.05.02/25(260))¹ 315-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի
Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (ՀՀՊՏ
1998.09.21/22(55))² 309-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության
Սահմանադրության 31-րդ և 37-րդ հոդվածներին, ինչպես նաև 42-րդ հոդվածի 3-
րդ մասին համապատասխանության հարցը:

Դիմողի կողմից բարձրացված իրավական խնդիրն առնչվում է ազատ լինելու
և դատական պաշտպանության իրավունքներին:

¹ Ընդունվել է 18.04.2003թ., ուժի մեջ է մտել 01.08.2003թ.:

² Ընդունվել է 01.07.1998թ., ուժի մեջ է մտել 12.01.1999թ.:

➤ **Միջամտության (մեկնաբանության շրջանակը).**

Սույն գրավոր մեկնաբանության շրջանակներում վիճարկվող նորմերի սահմանադրականության հարցը պարզելու համար Կենտրոնն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավական նորմերով նախատեսված իրավական կարգավորումները դիտարկել **ա) ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված «ազատ լինելու իրավունքի»** բովանդակության և **բ) ՀՀ սահմանադրության 19-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի** տեսանկյունից:

* * *

ա) ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասի դիտարկումը ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի համադրությամբ.

1. ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **Յուրաքանչյուր ոք ազատ է կարարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:**
2. ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթն ամրագրում է, այսպես կոչված, ազատ լինելու իրավունքը, որը երաշխավորված է նաև մի շարք միջազգային իրավական ակտերով:
3. 1789թ. Մարդու և քաղաքացու իրավունքների մասին ֆրանսիական հռչակագրի 4-րդ հոդվածը, որում առաջին անգամ իր ամրագրումն է գտել քննարկվող իրավունքը, սահմանում է. «Ազատությունը յուրաքանչյուրի հնարավորությունն է՝ անելու այն ամենը, ինչը չի վնասում այլոց. այդպիսով յուրաքանչյուրի բնական իրավունքների իրականացումն ունի լոկ այնպիսի սահմաններ, որոնք հասարակության մյուս անդամների համար ապահովում են նույն իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Այս սահմանները կարող են սահմանվել միայն օրենքով»:
4. ՀՀ Սահմանադրության **«ազատ լինելու իրավունքը»** ավելի բազմաբովանդակ է: Այն մեկնաբանելիս պետք է նկատի ունենալ նաև Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի հետ դրա համակարգային կապը: ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է հասարակական կյանքի հանրային-իրավական սուբյեկտների «ազատության» շրջանակները: Իսկ 42-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է անհատների վարքագծի իրավական կարգավորման հիմնարար սկզբունքը: Դրանք միաժամանակ իրավական պետության իրավական կարգավորման երկու հիմնական եղանակներն են՝ «արգելող»՝ հանրային-իրավական սուբյեկտների համար, և «թույլատրող»՝ անհատների համար:

5. Բացի այդ, ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունն անմիջականորեն կապված է նաև ՀՀ սահմանադրության 3-րդ հոդվածով սահմանված սահմանադրաիրավական նորմի հետ և պետք է մեկնաբանվի նաև այդ նորմի պահանջները հաշվի առնելով: Մասնավորապես, ՀՀ սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝
Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:
Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:
Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:
6. Ազատության սահմանները կարող են որոշվել միայն օրենքով, որն էլ հենց ազատության չափն է: Պետությունն օրենքների միջոցով ամրագրում է մարդու իրավունքներն ու ազատությունները, և այդ դեպքում դրանք դառնում են հնարավոր: Սակայն օրենքները կարող են մարդու հնարավորությունների շրջանակները կարգավորել երկակիորեն. **առաջին**՝ ամեն ոք կարող է կատարել այն, ինչը թույլատրված է օրենքով, և **երկրորդ**՝ ամեն ոք կարող է կատարել այն, ինչն արգելված չէ օրենքով:
7. Օրենսդրական կարգավորման առաջին եղանակը սահմանափակում է մարդու ազատությունը, որովհետև ստացվում է, որ անձը կարող է կատարել միայն այն, ինչը թվարկված է օրենքով: Այդպիսի կարգավորումը՝ նեղացնելով «ազատություն» եզրույթի բովանդակությունը, մարդուն դնում է պետական իշխանությունից կախվածության մեջ: Մարդու ազատությունը սահմանափակող այդպիսի իրավական կարգավորումը հստակեցնելով՝ Սահմանադրությունը տալիս է ազատության այն շրջանակը, որով հնարավոր է անել այն ամենն, ինչը արգելված չէ օրենքով: Նշված սկզբունքը սահմանափակում է պետական իշխանությունը երկակիորեն, *նախ*՝ անձը չի կարող կատարել միայն օրենքով արգելված արարքները, *երկրորդ*՝ անձի համար արգելված արարքների շրջանակը կարող է սահմանվել միայն օրենքով:
8. Արգելվում է կատարել այն, ինչը խախտում է այլ անձանց իրավունքները և ազատությունները: Արարքը կարող է ուղղակիորեն չլինել արգելված օրենքով: Սակայն դա չի նշանակում, որ անհատն իրավունք ունի այն կատարելու, որովհետև այս դեպքում գործում է մարդու իրավունքների սահմանի «**ոսկե կանոնը**»:³

³ ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջեր 493-494:

-
9. Բոլոր այն իրավունքները, որ ունեն անձինք, միաժամանակ իրավունքներ են ուրիշների համար, հետևաբար՝ նրանց պարտականությունն է հարգել դրանք, ապահովել ուրիշների իրավունքները, ձեռնպահ մնալ դրանք ոտնձգող գործողությունների կատարումից: Այդպիսով, անձի իրավունքների երաշխիքը ուրիշների պարտականությունն է և, հակառակը՝ նրա պարտականությունը՝ այլոց իրավունքների երաշխիքը: ***Ուստի, անձն ազատ է մինչև այնպեղ, որպեղ սկսվում են ուրիշների իրավունքները:***
10. Ավելին, մարդը բացի իրավունքների սուբյեկտից, նաև իրավական պարտականությունների սուբյեկտ է, որոնց շրջանակը պետք է սահմանվի օրենքով:
11. Ինչպես արդեն նշել ենք, քննարկվող սահմանադրական նորմը չի կարող մեկանաբնվել առանց ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածի բովանադակությունը հաշվի առնելու, որի համաձայն՝ *Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:*
12. Սահմանադրական այս նորմն իրավական պետության, իրավակարգի և օրինականության սկզբունքի հիմքում ընկած և իրավունքի գերակայության սկզբունքից բխող անկյունաքարային դրույթ է, որն արտահայտում է պետական իշխանության, պետական մարմինների և պաշտոնատար անձանց ազատության չափը՝ *«ամեն ոք կարող է կատարել այն, ինչը թույլատրված է օրենքով» սկզբունքին համապատասխան»:*
13. Իրավունքի գերակայության՝ ՀՀ սահմանադրության 3-րդ հոդվածով ամրագրված սահմանադրաիրավական նորմի էության համաձայն՝ պետությունը ճանաչում է մարդու բնական իրավունքներն ու ազատությունները որպես բարձրագույն արժեք: Իշխանություն իրականացնելիս պետությունը սահմանափակված է այդ իրավունքներով որպես անմիջականորեն գործող իրավունքներ: Ընդ որում, մարդու իրավունքների սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքով՝ սահմանադրությանը համապատասխան, ինչը պետք է բխի այլոց իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունից:
14. Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասը երաշխավորում է ինչպես իշխանությունների բաժանման և հավասարակշռման, այնպես էլ

իրավունքի գերակայության սահմանադրական սկզբունքների
իրականացումը:

15. Այս առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը՝ 14.10.2008թ. ՍԴՌ-766 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «ՀՀ Սահմանադրության 1, 2, 3, 5 հոդվածների համալիր վերլուծությունից բխում է, որ **պետական իշխանությունը հանդես է գալիս որպես պետականորեն կազմակերպված ժողովրդի հանրային իշխանության ձև, որն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա**: Այդ բաժանումն իրականացվում է իշխանության գործառնական բնույթից ելնելով, որին համապատասխան ձևավորվում են անհրաժեշտ կառուցակարգեր՝ իշխանության մարմիններ, որոնք սահմանադրորեն օժտվում են համարժեք լիազորություններով և իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:
16. Այսպիսով, ազատ լինելու սահմանադրական իրավունքը, որը երաշխավորված է ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասով, անհրաժեշտ է դիտարկել Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի՝ միայն սահմանադրությամբ կամ օրենքներով սահմանված լիազորություններ շրջանակներում գործելու պետական մարմինների և պաշտոնատար անձանց պարտականության (ազատության սահմանափակման) համատեքստում: Պաշտանոտար անձինք օժտված են ոչ թե օրենքով չարգելված ամեն ինչ անելու, այլ բացառապես օրենքով թույլատրված վարքագիծ դրսևորելու սահմանափակ ազատությամբ:
17. ՀՀ քրեական օրենսգրքի՝ վիճարկվող 315-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «1. Պաշտոնատար անձի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պարզաճ կատարելը, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը՝ պարժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով»:
18. Քրեաիրավական նման դրույթի սահմանումը ՀՀ քրեական օրենսգրքում, ի թիվս այլոց, բխում է ՀՀ սահմանադրության 83.5 հոդվածով սահմանված օրենքի **վերապահման սահմանադրական սկզբունքից**,

որի համաձայն՝ **Բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում՝**

...2) ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը...

...6) քրեական, վարչական, տնտեսական (գույքային), կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերը, կարգը, պայմանները, քրեական պատիժների իրականացման կարգը, դատական և վարչական ակտերի հարկադիր կատարման կարգը, փաստաբանների կարգավիճակը և լիազորությունները:

19. Քննարկվող գործի հանգամանքներով Դիմողը պաշտոնատար անձ է՝ ոստիկանության աշխատակից, որն օժտված է ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակ ազատությամբ այնքանով, որքանով կրում է օրենքով թույլատրված վարքագիծ դրսևորելու ազատություն (պարտականություն): Որպես պաշտոնատար անձ՝ վերջինս պարտավոր էր իր պարտականությունները կատարել բարեխղճորեն և պատշաճ կերպով:
20. Պաշտոնատար անձի պարտականությունների ամբողջությունը ոչ միայն վերջինիս՝ օրենքով թվարկված լիազորությունների սպառիչ ցանկ է, այլ իր դիրքին, պաշտոնին և/կամ ծառայությանը համապատասխան վարքագիծ դրսևորելու ողջամիտ պարտականություն, որի բովանդակությունը կազմող գործողությունների ամբողջությունը սպառիչ թվարկել բնականաբար հնարավոր չէ և ոչ էլ անհրաժեշտ: Յուրաքանչյուր պաշտոնատար անձ, ելնելով իր ծառայողական պարտականություններից՝ իր վարքագիծը պետք է համապատասխանեցնի իր ծառայությանը և պաշտոնի բնութագրին, բարեխիղճ և ողջամիտ գտնվի իր լիազորություններն իրականացնելիս:
21. Այս առումով, Դիմողի այն պնդումը, թե վերջինս չէր կարող իմանալ, որ կնիքը բաժնի աշխատողին հանձնելը կամ իր բացակայությամբ աշխատասեղանին թողնելը հանցագործություն է, քանի որ այդ արարքը և դրա հետևանքները հստակ նկարագրված չեն օրենքով, չունի ողջամիտ հիմնավորում՝ վերը ներկայացված վերլուծությունը հաշվի առնելով:
22. Նախ, քրեաիրավական տեսանկյունից՝ հանցանքը համարվում է անփութությամբ կատարված, եթե անձը չի նախատեսել իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ

իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել դրանք (<< քր. օր. հոդվ. 30, մաս 3):

23. Ոստիկանության աշխատակիցը՝ որպես պաշտոնատար անձ, նախ, տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել, որ կնիքը ուրիշին հանձնելու կամ անփույթ կերպով սեղանին թողնելու հետևանքով ուրիշի ձեռքում հայտնվելու պարագայում կարող էր օգտագործվել: Այսինքն՝ պաշտոնատար անձը, իր պաշտոնից և ծառայողական պարտականություններից ելնելով՝ պարտավոր էր կնիքն օգտագործել անձամբ և բացառել այն այլ անձանց կողմից օգտագործելու հնարավորությունը: Նման պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը ոչ այլ ինչ է, եթե ոչ պաշտոնեական անփութություն, որը նկարագրված է << քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի առաջին մասում՝ 30-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման հաշվառմամբ:
24. Նույնը վերաբերում է նաև կնիքն այլ անձի կողմից օգտագործելու հետևանքով էական վնաս պատճառելու հնարավորության նախատեսմանը. պաշտոնատար անձը տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել, որ կնիքն այլ անձի հանձնելու կամ անփույթ կերպով սեղանին թողնելու հետևանքով ուրիշի կողմից օգտագործվելու պարագայում կարող էին առաջանալ հանրության համար վտանագավոր հետևանքներ, այդ թվում՝ էական ոչ գույքային վնաս:
25. Ոչ գույքային վնասի էական կամ ոչ էական լինելը գնահատելը դատարանի իրավասությունն է և հնարավոր չէ օրենքով սպառիչ թվարկել հանրորեն վտանգավոր հետևանքների այնպիսի ամբողջությունը, որոնք ողջամտորեն կհամարվեն էական վնաս: Այս պարագայում քրեաիրավական տեսանկյունից կարևորը քրեական օրենքով հանրորեն վտանգավոր արարքի նկարագրությունը և վնասի էական լինելն ամրագրելն է, որի գնահատումը դատարանի իրավասությունն է:
26. Հայտնի է, որ սահմանադրության մեջ, միջազգային պայմանագրերում, եվրոպական դատարանի դատական նախադեպերում, օրենքներում և այլ իրավական ակտերում գնահատողական իրավական կատեգորիաները բազմաթիվ են (օրինակ՝ էական-ոչ էկան, պատշաճ-ոչ պատշաճ, ողջամիտ, համաչափ և այլն): Նման իրավական կարգավորումների գոյությունը պայմանավորված է հասարակական հարաբերությունների ողջ ամբողջությունը սպառիչ կերպով իրավական կարգավորման ենթարկելու անհնարինությամբ: Իրավական ակտերում օգտագործվող գնահատողական կատեգորիաների մեկնաբանումը, օգտագործումը, գնահատումն ու կիրառումը դատարանների խնդիրն է՝ հաշվի առնելով նաև դրանց՝ իրավակիրառող մարմին լինելու (նման

գործառույթ ունենալու) հանգամանքը:

27. Վերոշարադրյալ հիմնավորումները հաշվի առնելով՝ Կենտրոնը գտնում է, որ խնդրո առարկա քրեաիրավական նորմի բովանդակությունը կասկածներ չի հարուցում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին համապատասխանության տեսանկյունից:
28. Այսպես, իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի բովանդակությունը բազմիցս բացահայտվել է ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումներում: Օրինակ.
29. ՀՀ սահմանադրական դատարանն իր թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ սահմանել է. **«Իրավական որոշակիության, իրավական անվրանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը:»**:
30. ՀՀ սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ *«...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համարելու իր վարքագիծը»*: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»⁴:
31. Վերոշարադրյալի համատեքստում անկիայտ է, որ վիճարկելի քրեաիրավական նորմը՝ ՀՀ քր. օր. 315-րդ հոդվածի 1-ին մասը, բավարար որոշակի է, քանի որ նախ՝ այն սահմանում է քաղաքացու՝ պաշտոնատար անձի պարտականությունը (սահմանափակ ազատությունը)՝ ծառայության նկատմամբ դրսևորել բարեխիղճ և պատշաճ վերաբերմունք, պաշտոնական պարտականությունները

⁴ ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը:

կատարել բարեխղճորեն և պատշաճ կերպով: Այս առումով, կարծում ենք, քրեական օրենքը բավարար աստիճանի հստակ է և թույլ է տալիս պաշտոնատար անձին դրա հետ համատեղելու իր վարքագիծը, այսինքն՝ բարեխիղճ գտնվելու իր ծառայության նկատմամբ և պատշաճ կատարելու իր ծառայողական պարտականությունները:

32. Ինչ վերաբերում է իրավական հետևանքների կանխատեսելիությանը, ապա նախ, այդ հետևանքները նույնպես, ինչպես արդեն նշվել է, շարադրված են ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասում, այն է՝ անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը):
33. ՀՀ քր. օր. 315-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ արարքի քրեաիրավական որակման համար կարևոր չէ, թե իր ծառայության նկատմամբ անբարեխիղճ և անփույթ վերաբերմունք դրսևորած կոնկրետ պաշտոնատար անձը **որքանո՞վ է կանխադեսել** հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, **ինչպե՞ս է գնահատել** դրանց բնույթը և **որքա՞ն է գնահատել** հնարավոր հետևանքների վտանգավորության աստիճանը. կարևորը տվյալ իրադրությունում հանրորեն վտանգավոր հետևանքների՝ անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին էական վնաս պատճառելու հնարավորությունը ողջամտորեն նախատեսելու պարտականությունն է և հնարավորությունը, ինչն ուղղակիորեն նախատեսված է քրեական օրենքով:
34. Այսպիսով, Կենտրոնի համոզմամբ ներկայացված վերլույթի 2-րդ շրջանակներում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասը ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված իրավական նորմի և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին համապատասխանության տեսնակյունից, կասկած չի հարուցում:

* * *

ա) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի դիտարկումը ՀՀ սահմանադրության 19-րդ հոդվածի համադրությամբ.

35. Անհատական սահմանադրական դիմումով վիճարկվող հաջորդ նորմը ՀՀ քր. դատ. օր. 309-րդ հոդվածի 2-րդ մասն է: Ըստ նշված դատավարական նորմի՝ *Դատական քննության ընթացքում մեղադրանքի*

փոփոխություն թույլատրվում է, եթե դրանով չի վարթարանում ամբաստանյալի վիճակը, և չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը:

36. Վիճարկվող քրեադատավարական նորմն անհրաժեշտ է դիտարկել նախ ՀՀ սահմանադրության 19-րդ հոդվածին՝ դատական պաշտպանության իրավունքը սահմանող սահմանադրական նորմին համապատասխանության տեսանկյունից:
37. ՀՀ սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:*
38. Նախ, հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրության՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող 18-րդ հոդվածը ՀՀ սահմանադրական դատարանի դատական պրակտիկայում, որպես կանոն, վկայակոչվում է 19-րդ հոդվածի հետ սերտ միասնության մեջ՝ որպես իրենից մեկ միասնական իրավական երեույթ ներկայացնող: Դա մասնավորապես վերաբերում է արդարադատության մատչելիության իրավունքին՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի, որի սահմանադրական ամրագրումը դիտարկվում է 18 և 19-րդ հոդվածներում՝ միաժամանակ և միասնաբար՝ չկոնկրետացնելով դրա սահմանադրական-տեքստային հիմքը⁵:
39. ՀՀ սահմանադրական դատարանն իր 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին՝ առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային

⁵ ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջեր 222-223:

այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև:

40. Միաժամանակ, կարևորվել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:
41. Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. Եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը:
42. Կենտրոնն իր մի շարք եզրակացություններում և գրավոր մեկնաբանություններում անդրադարձ կատարել է դատական պաշտպանության իրավունքի էության բացահայտմանը:
43. Վերահաստատելով նախկինում տրված մեկնաբանությունները՝ Կենտրոնը հարկ է համարում հավելել, որ անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18 հոդվածի նպատակն իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է⁶:
44. Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական

⁶ ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. հունվարի 16, ՍԴՈ-673, 8-րդ կետ:

պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:⁷

45. ՀՀ սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված արդարադատության մատչելիության իրավունքի՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի հիմնարար սահմանադրական երաշխիքներն են՝

ա) դատական քննության հավասարությունը և արդարացիություն,

բ) անկախ և անկողմնակալ դատարան,

գ) դատական քննության ողջամիտ ժամկետ և

դ) հրապարակայնություն:

46. Արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել՝ կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջմունքներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետին, եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների և դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն»⁸:

47. Այսպիսով, ՀՀ քր. դատ. օր. 309-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ դատական քննության ընթացքում դատարանի կողմից մեղադրանքի փոփոխության թույլատրելիության սահմանադրականությունն անհրաժեշտ է ստուգել արդար դատական քննության և արդարադատության մատչելիության իրավունքի լույսի ներքո՝ մասնավորապես հաշվի առնելով քրեական դատավարությունում մարդու իրավունքների պաշտպանության այնպիսի երաշխիքներ, ինչպիսիք են՝ **ա) դատական քննության հավասարությունը և արդարացիությունը, բ) անկախ և անկողմնակալ դատարանի կողմից գործի լուծումը:**

⁷ ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

⁸ Golder v. United Kingdom, 21 feb. 1975, Fayed v. United Kingdom, 25 aug. 1994, Ashingdane v. United Kingdom, 28 may 1985, Garcia Manibardo v. Spain (15 feb. 2000), 29.06.2000, Bellet v. France, 20 nov. 1995, Philis v. Greece, 27 aug. 1991, Tolstoy Miloslavsky v. United Kingdom, 23 jun. 1995:

48. ՀՀ սահմանադրական դատարանը, գործի դատական քննության փուլում գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտի սահմանադրականությունը ստուգելիս, իր 24.07.2007թ. թիվ ՍԴՈ-710 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի պահանջն է, ի թիվս արդար դատաքննության այլ երաշխիքների, դատաքննության իրականացումը կողմերի հավասարության պայմաններում և անկողմնակալ դատարանի կողմից: **ՀՀ քր.դատ.օր.-ով նախատեսված կարգով գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով՝ դատարանը դուրս է գալիս դատավարությունում անկողմնակալ իր դերի շրջանակներից և ուղղորդում է լրացուցիչ նախաքննության ընթացքը՝ իրականացնելով արդարադատության գործառույթի հեղինակության հետևանքներով գործողություններ...**» (ընդգծումը՝ Կենտրոնի):

49. Նույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանը նաև արձանագրել է, որ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելն անհամատեղելի է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի այնպիսի տարրերի հետ, ինչպիսիք են դատաքննությունն անկողմնակալ դատարանի կողմից և այն հավասարության ու մրցակցության սկզբունքների հիման վրա իրականացնելու պահանջները: Չնայած նրան, որ դատաքննության հավասարության և մրցակցության սկզբունքները հստակ ամրագրված չեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից՝ 6-րդ հոդվածում նշված **«արդարացի լսումներ»** հասկացության մեկնաբանությունների արդյունքում ձևավորվել է հստակ նախադեպ, համաձայն որի՝ լսումների արդարացիության տարրերից են դատավարության կողմերի հավասարությունը և մրցակցային դատավարությունը, որոնք սերտորեն կապված են միմյանց հետ:

50. Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջը համարելով դատավարության մրցակցության և հավասարության սկզբունքներ, միաժամանակ հետևողականորեն իր վճիռներում բացահայտել է այդ սկզբունքների բովանդակությունը, որոնց համաձայն՝ **«կողմերի հավասարությունը»** նշանակում է, որ դատավարության յուրաքանչյուր կողմին պետք է ընձեռնվի պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը, ներառյալ՝ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրա համար մյուս կողմի համեմատությամբ չեն ստեղծի անբարենպաստ վիճակ:⁹

51. ՀՀ սահմանադրական դատարանը ՍԴՈ-710 որոշման մեջ հատկապես

⁹ Տե՛ս, օրինակ, Եվրոպական դատարանի՝ Մատեյն ընդդեմ Ֆրանսիայի գործով 19.12.2006թ. վճիռը, *Mattei v. France*, 34034/02:

կարևորել է դատարանին մեղադրանքի գործառույթից «*ձերբազատելու*» խնդիրը, քանի որ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելը մեղադրանքի կողմի գործառույթ է: Գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով, ինչպես արդեն նշել ենք, դատարանը դուրս է գալիս դատավարությունում անկողմնակալ իր դերի շրջանակներից և ուղղորդում է լրացուցիչ նախաքննության ընթացքը՝ իրականացնելով արդարադատության գործառույթի հետ անհամատեղելի գործողություններ: Ընդ որում, գործը դատարանի կողմից լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտի սահմանադրականությունը գնահատելիս՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ **դատարանը նաև կողմերի միջև հավասարության նժարը խախտում է ի շահ մեղադրանքի կողմի, դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ անձի դատական և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:**

52. Ըստ սահմանադրական դատարանի նույն որոշման՝ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտի նման ձևով կիրառումը պարունակում է նաև արդար դատաքննության տարրերից մեկի՝ **դատաքննությունը ողջամիտ ժամկետում** կազմակերպելու պահանջի խախտման վտանգ, ինչպես նաև ըստ էության շրջանցվում է ՀՀ սահմանադրության 21-րդ հոդվածում ամրագրված **չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու** սահմանադրական պահանջը:
53. Այսպիսով՝ հաշվի առնելով գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու քրեադատավարական կարգավորումներում մարդու իրավունքների պաշտպանության վերը թվարկված երաշխիքների բացակայությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանն այս ինստիտուտը ճանաչել է ՀՀ սահմանադրությանը հակասող և անվավեր:
54. ՀՀ քր. դատ. օր. 315-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին համահունչ գնահատելու համար, Կենտրոնը կարևոր է համարում հատկապես անդրադառնալ ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2010թ. թիվ ՍԴՈ-872 որոշմանը:
55. Նշված գործով դատարանը քննարկել է ՀՀ քր. դատ. օր. 309.1 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված կարգով մեղադրողի կողմից մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու և այդ հիմքով գործի քննությունը հետաձգելու ինստիտուտի սահմանադրականությունը և այդ գործով իր մի շարք դիրքորոշումները համադրելով 24.07.2007թ. թիվ ՍԴՈ-710 որոշման մեջ շարադրված դիրքորոշումների հետ, արձանագրել է.

«Օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի իրավակարգավորման ուղղվածության առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նոր մեղադրանք առաջադրելու հետ կապված հարաբերությունների կարգավորման շրջանակներում օրենսդիրն **ազատ է ընտրելու իրավակարգավորման ցանկացած ուղղվածություն**: Տվյալ պարագայում սահմանադրական դատարանի խնդիրն է գնահատել, թե արդյոք տվյալ իրավակարգավորման արդյունքում առկա են բավարար երաշխիքներ դատարանին՝ մեղադրական թեքումից ձերբազատվելու և դատական քննությունը հետաձգելուց հետո նոր մեղադրանք առաջադրելու փուլում կողմերի դատավարական իրավունքների լիարժեք պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ:»:

56. Վերլուծելով ՀՀ քր. դատ. օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատաքննության շրջանակներում լրացուցիչ ապացույցների ձեռքբերման և այլ դատավարական գործողությունների կատարմամբ մեղադրանքը փոխելու դեպքում օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերն **իրավակարգավորման առումով դատարանին մեղադրական թեքումից ձերբազատվելու և անկողմնակալ արդարադատություն իրականացնելու բավարար երաշխիքներ պարունակում են՝** դրանց սահմանադրաիրավական իրենց բովանդակությանը համապատասխան ընկալման ու իրացման պարագաներում...» (ընդգծումները՝ Կենտրոնի):
57. Ընդ որում, ՀՀ սահմանադրական դատարանի կողմից նշված գործով, ի թիվս այլ երաշխիքների, առանձնացվել են նաև հետևյալները.
- ա) դատական նիստի հետաձգումը դատարանի **հայեցողական լիազորությունն է**, իսկ միջնորդությունը՝ մեղադրողի խնդրանքը, որը դատարանը **կարող է** բավարարել միայն օրենքով սահմանված պայմանների պահպանման, անհրաժեշտ հիմնավորումների ու **մյուս կողմի կարծիքը լսելու արդյունքում**,
- բ) դատարանը պետք է հանգի այն համոզման, որ այդ գործողությունները կատարվում են դատաքննության շրջանակներում՝ **առանց ամբաստանյալի կարգավիճակի փոփոխության, երաշխավորելով նաև պաշտպանական կողմի դատավարական իրավունքները**:
58. Այսպիսով՝ ՀՀ սահմանադրական դատարանի դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ **մեղադրանք առաջադրելու, մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու հետ կապված հարաբերությունների կարգավորման հարցում օրենսդիրը որևէ կերպ սահմանափակված չէ ընտրելու իրավակարգավորման որոշակի,**

կոնկրետ ուղղվածություն: Կարևորը մեղադրանք առաջադրելուն, փոփոխելուն կամ լրացնելուն ուղղված իրավադրույթները համապատասխանեն ՀՀ սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով ամրագրված մարդու հիմնական իրավունքներին և պարունակեն այնպիսի դատավարական երաշխիքներ, ինչպիսիք են՝ մասնավորապես, կողմերի հավասարությունը, դատարանի անկողմնակալությունը, մրցակցությունը, անմեղության կանխավարկածը, մեղադրյալի պաշտպանության իրավունքը, արդար դատաքննությունը, արդարադատության մատչելիությունը և այլն:

59. Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները՝ Կենտրոնը գտնում է, որ քննարկվող անհատական դիմումով վիճարկվող ՀՀ քր. դատ. օր. 309-րդ հոդվածի 2-րդ մասը, ճիշտ է, բովանդակում է որոշակի դատավարական երաշխիքներ մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման համար, սակայն այդ երաշխիքների գոյության պայմաններում նույնիսկ, ըստ Կենտրոնի, առկա է ՀՀ սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով երաշխավորված մարդու հիմնական իրավունքների խախտման վտանգ, քանի որ այդ երաշխիքները **բավարար չեն դատարանին մեղադրական թեքումից ձերբազատելու և անկողմնակալ արդարադատություն իրականացնելու համար:**

60. Նախ, ՀՀ քր. դատ. օր. 309-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դատավարական երաշխիքներն են՝
ա) ամբաստանյալի վիճակի վատթարացման արգելքը,
գ) ամբաստանյալի պաշտպանության իրավունքի խախտման արգելքը:

61. Այսինքն՝ դատարանի կողմից մեղադրանքի փոփոխության **թույլատրելիությունը (հայեցողական լիազորության իրականացումը)** օրենսդիրը կախվածության մեջ է դրել երկու հանգամանքների միաժամանակյա առկայությունից՝ ա) եթե դրանով չի վատթարանում ամբաստանյալի վիճակը (դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության սկզբունքի պահպանումը), և բ) չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը (արդար դատաքննության և արդարադատության մատչելիության իրավունքի ապահովումը):

62. Քննարկվող քրեադատավարական նորմի սահմանադրականությունը, մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքներ նախատեսելուց զատ, այնուամենայնիվ, խնդրահարույց է՝ հատկապես դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխությունը **դատարանի նախաձեռնությամբ** թույլատրելու տեսանկյունից:

63. Ինչպես արդեն նշվել է, դատական քննության փուլում գործը լրացուցիչ

նախաքննության ուղարկելու ինստիտուտի հակասահմանադրականությունը հարուցելու առաջնային պատճառը դատարանին մեղադրական գործառույթ հաղորդելն էր: Նույնանման իրավիճակ է ստացվում, փաստորեն, նաև դատական քննության փուլում դատարանին մեղադրանք փոփոխելու իրավասություն շնորհելու պարագայում՝ սեփական նախաձեռնությամբ: Առանց մեղադրողի միջնորդության գործի դատական քննության ընթացքում դատարանին իրավունք վերապահելը իրականացնելու մեղադրանքի փոփոխություն, նույնիսկ մեղադրանքն անձի վիճակը բարելավող մեղադրանքով փոխարինելու պայմանով, ինչը կարծում ենք, չի բխում մրցակցային դատավարության սկզբունքից և հարիր չէ այդպիսի դատավարությունում դատարանի դերին և կոչմանը:

64. Որքան էլ դատարանի խնդիրը գործի հանգուցալուծումն է, դա չի նշանակում, որ դատարանին պետք է իրավունք վերապահվի նախաձեռնելու և իրականացնելու մեղադրանքի փոփոխություն: Մրցակցային դատավարությունում իրավունքի շահերն արտահայտող դատարանի խնդիրը միմյանց հետ մրցակցող մեղադրանքի և պաշտպանության կողմերի դիրքորոշումների համադրման արդյունքում վեճը լուծելն է առաջադրված և պաշտպանվող մեղադրանքի շրջանակներում: Դատարանին իր նախաձեռնությամբ մեղադրանքի փոփոխման իրավասությամբ օժտելը ոչ այլ ինչ է, քան դատարանին մեղադրական գործառույթի շնորհում, ինչը դատարանի անկախության և անկողմնակալության սկզբունքի հետ անհամատեղելի է:

65. Ճիշտ է, դատական քննության ընթացքում դատարանի կողմից մեղադրանքի փոփոխման հնարավորությունը պայմանավորված է մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտման արգելքով, սակայն քննարկվող ինստիտուտը բավարար կարգավորված չէ այնպես, որպեսզի ապահովվի մեղադրյալի պաշտպանության իրավունքը: Մասնավորապես, ըստ քրեադատավարական կարգավորումների, մեղադրանքի փոփոխումը դատարանի նախաձեռնությամբ կարող է իրականացվել միայն դատական քննության ավարտին վերջնական դատական ակտով՝ դատավճռով, որի պարագայում ամբաստանյալը զրկվում է փոփոխված մեղադրանքի շրջանակներում հավասարության պայմաններում իր դիրքորոշումն արտահայտելու, մեղադրանքի կողմի միջնորդության դեմ առարկելու, նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից: Այդ դեպքում դատարանը, փաստորեն, մեղադրանքի փոփոխման վերաբերյալ մեղադրողի միջնորդությունը և դրա դեմ ներկայացված առարկությունը լսելու և լուծելու փոխարեն օժտվում է մեղադրանք առաջադրելու լիազորությամբ՝ խախտելով անկողմնակալության և անկախության, արդարացիության և հավասարության սահմանադրական սկզբունքները:

66. Եթե քրեադատավարական կարգավորումներում դատական քննության

ընթացքում մեղադրանքի փոփոխման նախաձեռնության իրավունքը դատարանի փոխարեն տրամադրվել մեղադրանքի կողմին, ինչպես դա կարգավորված է ՀՀ քր. դատ. օր. 309.1 հոդվածի 1-ին մասում, ապա այդ դեպքում հնարավորինս կհավասարակշռվեն կողմերի հնարավորությունները դատարանում մեղադրանքը պաշտպանելու և մեղադրանքից պաշտպանվելու հարցում, իսկ դատարանին կմնար միայն փոփոխված մեղադրանքի շրջանակներում կողմերի դիրքորոշումներն ու ապացույցները հաշվի առնելով ըստ էության լուծել գործը:

67. Այսպիսով, Կենտրոնի համոզմամբ ՀՀ քր. դատ. օր. 309-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխության իրավակարգավորումը չի բխում է ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված դիրքորոշումներից՝ սույն գրավոր մեկնաբանության մեջ տրված իրավական վերլուծության շրջանակներում:

➤ **Եզրակացություն.**

Ամփոփելով գրավոր մեկնաբանությունը՝ հաշվի առնելով վերը ներկայացված վերլուծությունը՝ Կենտրոնը գտնում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի քննությանը հանձնված սույն անհատական դիմումով վիճարկվող ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասը ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված իրավական նորմի և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին համապատասխանության տեսնակյունից, կասկած չի հարուցում, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասը բովանդակում է որոշակի դատավարական երաշխիքներ մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման համար, սակայն այդ երաշխիքների գոյության պայմաններում նույնիսկ առկա է ՀՀ սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով երաշխավորված մարդու հիմնական իրավունքների խախտման վտանգ, քանի որ այդ երաշխիքներն ըստ Կենտրոնի, բավարար չեն դատարանին մեղադրական թեքումից ձերբազատելու և անկողմնակալ արդարադատություն իրականացնելու համար:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան

քարտուղար՝

Իրինա Փիլոյան